Արձանագրություն N 2
ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/13 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 15 փետրվարի 2022թ
ժամը 10:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանը
անդամներ՝ Հասմիկ Ղուլյանը, Մանուշակ Գրիգորյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի բացման մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	***Մասնակցի անվանումը***		***Մասնակցի հասցեն և կապի միջոցները***
1	2		3
1	«Քինգ Մարշալ» ՍՊԸ	-	Ք. Երևան, Բագրատունյաց փողոց թիվ 10/5, հեռ. 098470040, 81-22, 011-81-22-00, king-marshal@mail.ru
2	«Սուր և Նիզակ» ՍՊԸ	-	ք.Երևան, Գրողների 18, հեռ. 010 62 41 83, 093 75 68 05, surevnizak2021@mail.ru
3	«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ	-	ք. Երևան, Սարի Թաղ 5 շարք 5, հեռ. 099-95-96-05, 0099555587@mail.ru
4	«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ	-	ք. Երևան, Արաբկիր 49 փող. շենք 1, հեռ. +374 10 200265, 091 13 50 69, law@armobil.am, info@armobil.am

բ/ Մասնակիցների կողմից աճուրդի ամփոփման ժամկետի ավարտին առաջարկված գները ըստ չափաբաժինների ներկայացված են ստորև.

Չափաբ. համարը	Գնման առարկա	Մասնակիցների անվանումները և առաջարկած գինը ըստ չափաբաժինների առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)				Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/
	անվանումը	«Քինգ Մարշալ» ՍՊԸ	«Սուր և Նիզակ» ՍՊԸ	«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ	«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ	
1	2	3	4	5	6	7
1.	անվտանգության ապահովման ծառայություններ	1450000	1692000	1710000	2500000	1520000
2.	անվտանգության ապահովման ծառայություններ	1728000	3562500	3600000	5100000	6820000

գ/ Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն ներկայացվել, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

II. Հայտերի գնահատման մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց հայտերով ներկայացված փաստաթղթերը և արձանագրեց, որ.

ա/ 1-ին չափաբաժնի համար բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

բ/ էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի կողմից մերժվել է 1-ին չափաբաժնի համար ներկայացված հայտերը՝ հետևյալ հիմնավորմամբ՝ առաջարկված գինը գերազանցում է գնման նախահաշվային գինը:

գ/ 2-րդ չափաբաժնի համար 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ մասնավորապես.

- ներկայացված աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (հավելված 1) չի համապատասխանում ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/13 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված պահանջներին՝ «ռուսերեն լեզվով անվանումը» տողում լրացված է մասնակցի անվանման հայերեն տարբերակը:

- հայտի փաստաթղթերը ստորագրելու համար տրված լիազորագիրը չի համապատսխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին՝ Իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ, սակայն լիազորագիրը ստորագրված և հաստատված չէ:

2.1 Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի կողմից, առաջարկված գինը գերազանցելու հանգամանքով պայմանավորված մերժված մասնակիցների տվյալները և հրավերի 8.9 կետով սահմանված պահանջները, որոշեց.

ա/ մերժել 1-ին չափաբաժնի համար բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը հրավերի 8.9 կետով սահմանված պահանջի համապատասխան:

բ/ մերժել 2-րդ և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը հրավերի 8.9 կետով սահմանված պահանջի համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը որոշեց.

ա/ 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ հետևյալ հիմնավորմամբ՝ առաջարկված գինը գերազանցում է գնման հայտով ներկայացված նախահաշվային գինը:

բ/ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդի հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն համակարգի միջոցով տեղեկացնել 2-րդ չափաբաժնի համար 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

դ/ ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2022թ. փետրվարի 17-ին ժամը 11.10-ին ք. Երևան, Նալբանդյան 13 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Սողոմոն Մաթևոսյան

անդամներ՝ _____ Հասմիկ Ղուլյան

_____ Մանուշակ Գրիգորյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 15 փետրվարի 2022թ.

ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/13 ծածկագրով էլեկտրոնային աճուդով ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանս, անդամներ՝ Հասմիկ Ղուլյանս, Մանուշակ Գրիգորյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահ _____ Սողոմոն Մաթևոսյան

անդամներ՝ _____ Հասմիկ Ղուլյան

_____ Մանուշակ Գրիգորյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան